

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԾ-ԳՀ-ԱՇԶԲ-2019/28

ք. Երևան

19.05.2019թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը», ի դեմս Աշոտ Կիրակոսյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՅՂԿԱՂ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վահան Գևորգյանի, որը գործում է Հնկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաբեր-նախահաշվով նախատեսված «ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի շենքի ներքին հարդարում» աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաբեր-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքներն սկսվում են 2019 թվականի ապրիլի 5-ից և կատարման ժամկետը սահմանվում է 120 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին (հավելված 5) և ծավալաթերթին (հավելված 1) համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում,

ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառու և պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառու և պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամեկտ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 15,907,500 (տասնհինգ միլիոն ինը հարյուր յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որից 2,651,250 (երկու միլիոն վեց հարյուր հիսունմեկ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Գանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ցուրաքանչյուր

դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ¹:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $VQS = UQ / \sqrt{Qx} \sqrt{Qx} \sqrt{Qx}$, որտեղ՝

UQ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է²:

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է:

ՄԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է:

Մ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է:

VQS - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով³:

¹ Կապալառուն կարող է իրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

² Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ, ապա UQ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:

³ Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուի վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂՔԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՋԻՏՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՑԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են զնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1, N 5, N 6 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՑԽ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման
հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,

Կ.Ոսկեցու 31

ՀՎՀՀ՝ 00846441

Հ/Հ՝ 900018001231

Կենտրոնական զանապետարան

Գործադիր տնօրեն

Աշոտ Կիրակոսյան



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՅՆԿԱՂ» ՍՊԸ

Հասցեն՝ ք. Երևան, Անդրանիկի 46/31

ՀՎՀՀ՝ 00874700

Հ/Հ՝ 1570052026170100

Բանկ՝ «Ամերիա» Բանկ

Տնօրեն

Վ. Գևորգյան



Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը
չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
19 Ե Մարտի 2019 թ. կնքված
ՀՄ-ԳՀ-ԱԵՀԲ-2019/28 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇՎ *
ՀՀ Շիրակի մարզի Գյումրու հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի շենքի ներքին հարդարման
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

1	2	3	4	5	6	7
Քանդման աշխատանքներ						
1	E13-5 ԲԿՏՄ	Պատերի կաֆելով երեսապատվածքի քանդում	մ2	32,00	0,65	20,933
2	E46-35	Պատերի գաջե սվաղի քանդում	մ2	24	0,20	4,876
3	E13-5 կիրարկ.	Հատակների մետախե երեսապատվածքի քանդում	մ2	18,00	0,65	11,775
4	E23-174 ԲԿՏՄ	Դռների ապամոնտաժում, հանձնում	մ2	16,40	1,07	17,524
5	E19-69 ԲԿՏՄ	Լվացարանների ապամոնտաժում, հանձնում սեփականատիրոջը	հատ	3	0,54	1,612
6	E19-70 ԲԿՏՄ	Ջուգարանակոնքերի ապամոնտաժում	հատ	2	0,67	1,338
7	E8-601-1	Առատաղի լուսատուների ապամոնտաժում, հանձնում սեփականատիրոջը	հատ	33	0,45	14,983
8	E23-171 ԲԿՏՄ	Հատակների ոչ պիտանի լինելուց երեսապատման քանդում	100մ2	1,43	16,20	23,168
9	E46-40	Դռների բացվածքի համար տուֆաքարե պատի քանդում	մ3	0,20	22,64	4,529
10	E46-80	Բետոնե բլոկներով միջնորմների քանդում	մ3	7,50	9,04	67,800
11	E23-248 ԲԿՏՄ	Հարկում առաջացած շին աղբից մաքրում	տն	16,29	0,68	11,009
12	E23-225 ԲԿՏՄ	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա ձեռքով	տն	16,29	0,61	9,943
13	E310-10	Շին աղբի տեղափոխում 7 կմ , բեռնաթափում	տն	16,29	1,73	28,180
III հարկ						
14	E13-5 ԲԿՏՄ	Պատերի կաֆելով երեսապատվածքի քանդում	մ2	30,00	0,65	19,625
15	E46-35	Պատերի գաջե սվաղի քանդում	մ2	8	0,20	1,625
16	E13-5 կիրարկ.	Հատակների մետախե երեսապատվածքի քանդում	մ2	16,00	0,65	10,467
17	E23-174 ԲԿՏՄ	Դռների ապամոնտաժում, հանձնում սեփականատիրոջը	մ2	31,00	1,07	33,124
18	E19-69 ԲԿՏՄ	Լվացարանների ապամոնտաժում, հանձնում սեփականատիրոջը	հատ	3	0,54	1,612
19	E19-70 ԲԿՏՄ	Ջուգարանակոնքերի ապամոնտաժում	հատ	2	0,67	1,338

20	E8-601-1	Անատաղի լուսատուների ապամոնտաժում, հանձնում սեփականատիրոջը	հատ	54	0,45	24,518
21	E23-171 ԲԿՏՄ	Հատակների ոչ պիտանի լինելու մե երեսապատման ծախսում	100մ2	2,60	16,20	42,123
22	E46-40	Դռների բացվածքի համար տուֆաքարե պատի քանդում	մ3	1,00	22,64	22,643
23	E46-80	Բետոնե քլոկներով միջնորմների քանդում	մ3	9,40	9,04	84,976
24	E23-248 ԲԿՏՄ	Հարկում առաջացած շին աղբից մաքրում	տն	19,00	0,68	12,843
25	E23-225 ԲԿՏՄ	Շին աղբի բարձում ինքնաթափերի վրա ձեռքով	տն	19,00	0,61	11,600
26	E310-10	Շին աղբի տեղափոխում 7 կմ , քեռնաթափում	տն	19,00	1,73	32,877

Միջնորմներ, պատեր

II հարկ						
1	E8-169	Միջնորմների շարվածք պեմզոլիտով, 390x190x90մմ,	մ2	38,4	4,94	189,626
2	E8-150	Անցքերի լցում, B 12,5 դասի թեթև բետոն	մ3	1,15	38,25	44,060
	E8-59	Ամրանավորում	տն	0,095	65,39	6,212
3	C124-1-6	Ամրան A-I դասի Փ 6 մմ	տոն	0,052	517,83	26,927
4	C124-3-12	Ամրան A-III դասի Փ 12 մմ	տոն	0,043	503,47	21,649
5	E8-140	Միջնորմների շարվածք պեմզոլիտով, 390x190x190մմ,	մ3	3,60	30,96	111,449
6	E8-150	Անցքերի լցում, B 12,5 դասի թեթև բետոն	մ3	1,30	37,02	48,124
7	E8-59	Ամրանավորում	տն	0,063	65,39	4,120
8	C124-1-6	Ամրան A-I դասի Փ 6 մմ	տոն	0,013	517,83	6,732
9	C124-3-12	Ամրան A-III դասի Փ 12 մմ	տոն	0,05	503,47	25,173
III հարկ						
10	E8-169	Միջնորմների շարվածք պեմզոլիտով, 390x190x90մմ, նաև բացվածքի փակում	մ2	40,5	4,94	199,997
11	E8-150	Անցքերի լցում, B 12,5 դասի թեթև բետոն	մ3	1,22	38,25	46,469
	E8-59	Ամրանավորում	տն	0,098	65,39	6,409
12	C124-1-6	Ամրան A-I դասի Փ 6 մմ	տոն	0,055	517,83	28,481
13	C124-3-12	Ամրան A-III դասի Փ 12 մմ	տոն	0,043	503,47	21,649
14	E8-140	Միջնորմների շարվածք պեմզոլիտով, 390x190x190մմ,	մ3	3,60	30,96	111,449
15	E8-150	Անցքերի լցում, B 12,5 դասի թեթև բետոն	մ3	1,30	37,02	48,124
16	E8-59	Ամրանավորում	տն	0,063	65,39	4,120
17	C124-1-6	Ամրան A-I դասի Փ 6 մմ	տոն	0,013	517,83	6,732
18	C124-3-12	Ամրան A-III դասի Փ 12 մմ	տոն	0,05	503,47	25,173
19	E46-7	Պատում բացվածքի եզրերի ուժեղացում՝ շրջանակելով մետաղական գոտեկապերով	տոն	0,073	250,43	18,281

23	E15-300	Պատում բացվածքի եզրերի ուժեղացման բարձրորակ ցեմենտ-ավազե սվաղ	մ2	6,00	3,33	19,959
----	---------	---	----	------	------	--------

Դռներ

II հարկ						
1	C122	/2100(H)x700մմ, 4հատ/ չափերով մետաղապլաստից խուլ դռների տեղադրում, սպիտակ, արտերկիր 60մմ հաստ.	մ2	5,88	40,14	236,047
2	C122	/2100(H)x900մմ, 7հատ/ չափերով մետաղապլաստից խուլ դռների տեղադրում, սպիտակ, արտերկիր 60մմ	մ2	13,23	40,14	531,105
3	C122	/2100(H)x1000մմ, 5հատ/ չափերով մետաղապլաստից դռների տեղադրում, խուլ , սպիտակ, արտերկիր 60մմ հաստ.	մ2	10,50	40,14	421,512
4	C122	/2100(H)x1100մմ, 4հատ/ չափերով մետաղապլաստից դռների տեղադրում, խուլ , սպիտակ, արտերկիր 60մմ հաստ.	մ2	9,24	40,14	370,930
5	C122	/1500(H)x1000մմ, 3հատ/ չափերով ցնցուղների պլաստիկ դռների տեղադրում,	մ2	4,50	19,02	85,569
III հարկ						
6	C122	/2700(H)x2740մմ, 1հատ/ չափերով պլումինե, առանց ջերմակամրջակի, դռով ապակեպատ միջնորմի տեղադրում,մեկ տակ առակի , սպիտակ, արտերկիր	մ2	7,40	40,14	296,985
7	C122	/2100(H)x700մմ, 2հատ/ չափերով մետաղապլաստից խուլ դռների տեղադրում, սպիտակ, արտերկիր 60մմ	մ2	2,94	40,14	118,023
8	C122	/2100(H)x900մմ, 2հատ/ չափերով մետաղապլաստից խուլ դռների տեղադրում, սպիտակ, արտերկիր 60մմ	մ2	3,78	40,14	151,744
9	C122	/2100(H)x1000մմ, 6հատ/ չափերով մետաղապլաստից դռների տեղադրում, խուլ , սպիտակ, արտերկիր 60մմ հաստ.	մ2	12,60	40,14	505,814
10	C122	/2100(H)x1100մմ, 7հատ/ չափերով մետաղապլաստից դռների տեղադրում, խուլ , սպիտակ, արտերկիր 60մմ հաստ.	մ2	16,17	40,14	649,128
11	C122	/1500(H)x1000մմ, 3հատ/ չափերով ցնցուղների պլաստիկ դռների տեղադրում,	մ2	4,50	19,02	85,569

Հատակներ

II հարկ						
Վինիլային հատակներ						
1	E11-55 E11-56	Հարթեցնող շերտ ցեմենտ-ավազային երեսասվաղ, միջինը 25մմ հաստ.	100մ2	1,433	125,83	180,319
2	Կաշկույ. Raf-floor	Հատակների վինիլային ծածկույթ, 2մմ հաստ., ինքնահավասարեցնող շերտի և շրիշակների պատրաստումով, II հարկ	մ2	143,30	9,031	1294,171
Կերամիկական սալիկներով հատակ /սանհանգույց/						
3	E11-55 E11-56	Հարթեցնող շերտ ցեմենտ-ավազային երեսասվաղ, միջինը 25մմ հաստ.	100մ2	0,3174	146,18	46,398
4	E11-47 E11-	Ջրամեկուսիչ՝ շերտ 2 շերտ քիտումային քուլ	100մ2	0,3174	212,44	67,429

5	E11-57 E11-58	Բետոնային շերտ, 150մմ հաստ., B12,5(M150) դասի բետոն, սանհանգույցում	100մ2	0,036	664,06	23,906
6	E11-55 E11-56	Հարթեցնող շերտ ցեմենտ-ավազային երեսասվաղ, միջին 25մմ հաստ. մետախի տակ	100մ2	0,3174	146,18	46,398
7	E11-134	Հատակների ծածկի շերտ կերամիկական սալիկներով՝ մետախ, լոգոցի ջրարգելապատի պատրաստումով	մ2	32,3	6,63	214,137
III հարկ Վինիլային հատակներ						
8	E11-55 E11-56 Կալկույ. Raf-floor	Հարթեցնող շերտ ցեմենտ-ավազային երեսասվաղ, միջին 25մմ հաստ. Հատակների վինիլային ծածկույթ, 2մմ հաստ., ինքնահավասարեցնող շերտի և շրիշակների պատրաստումով, III հարկ	100մ2	2,499	125,83	314,457
		Կերամիկական սալիկներով հատակ /սանհանգույց/	մ2	249,90	9,031	2256,897
9	E11-55 E11-56	Հարթեցնող շերտ ցեմենտ-ավազային երեսասվաղ, միջին 25մմ հաստ.	100մ2	0,3174	146,18	46,398
10	E11-47 E11-	Ջրամեկուսիչ՝ շերտ 2 շերտ քիտումային քուլ	100մ2	0,3174	212,44	67,429
11	E11-55 E11-56	Հարթեցնող շերտ ցեմենտ-ավազային երեսասվաղ, միջին 25մմ հաստ. մետախի տակ	100մ2	0,3174	146,18	46,398
12	E11-134	Հատակների ծածկի շերտ կերամիկական սալիկներով՝ մետախ, լոգոցի ջրարգելապատի պատրաստումով	մ2	32,3	6,63	214,137

Ներքին հարդարում

II հարկ						
1	E11-57 ԲԿՏՄ	Պատերի, միջնորմների գաջե սվաղի վերանորոգում	մ2	22,0	2,29	50,362
2	E14-142 ԲԿՏՄ	Յուղաներկված պատերի լվացում և 2 անգամ բարձրորակ յուղաներկում՝ հին ներկվածքի 35%-ից	100մ2	2,65	128,49	340,506
3	E14-320 ԲԿՏՄ Լիուան	Պատերի մակերևույթից ջրաձմուսիոն ներկի մաքրում	100մ2	3,74	17,23	64,426
4	E15-277-1	Ղռների շեպերի բարձրորակ գաջե սվաղ	100մ2	0,15	387,13	58,069
4/1	E17-140 ԲԿՏՄ	Ջեռուցման սարքերի ապամոնտաժում և մոնտաժում, հարդարման աշխատանքների կատարման համար	հատ	12	2,84	34,038
